

Ժ.

ՅԱԿՈՎԲՈՍ ՄԵՍՐՈՊ Վ.

ՔԵԱՅԵԱ ՕԶԼՈՒ ԱՐԱՊԵԱՆ Կ. ՊՈԼՍԵՑԻ

ԱՐՔԵՊՍ. ԼԱՄԲԵՐՈՒԻ ԵՒ ՏԱՐՍՈՒՆԻ ԿԵԼԻԿԻՈՅ

(1707—1779)

Քանի մը վաւերագիրներէ միայն կը ճանչնանք սոյն Արքեպս.ի կենաց քանի մը պարագաները:

Արէլ Արքեպս.ի կենսագրութեան մէջ, զոր վերն (էջ 235) հրատարակեցի, ի լոյս ընծայեցի Յակովբոս-Մեսրոպ Արքեպս.իս մասին քանի մը վաւերագիրներ: Ասոնց համեմատ՝ Յակովբոս անուամբ Կ. Պոլսեցի դարբին մը, որդի Քեաճեա Արապ օղուի, եկեղեցական վիճակի բաղձալով՝ կը հետեւի հայ կաթողիկէ եկեղեցականի մը, որ կը սորվեցընէ իրեն եկեղեցական ուսումները: Յետոյ տեղւոյն Լատին Եպիսկոպոս Պօնայի կը յանձնարարէ զինքը կաթողիկէ Հայոց համար անուանուած իր փոխանորդն (վիքար) Նիկովիդացի Յովհաննէս, որ Ս. Ժողովոյ Դպրանոցին աշակերտ եւ Աստուածաբանութեան վարդապետ էր, որպէս զի ձեռնադրուելու վկայական տայ անոր: Սոյն փոխանորդը նաեւ իր իսկ